ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
с.ГЕХАКЕРТ

Գեղակերտի գյուղապետարան հեռ. 093250663 , 0231 63447
Село Гехакерт тел. 093250663 , 0231 63447

N 150

« 04 » « 10 » 2011թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Ա. Ղահրամանյանին

Մեծարգո պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի սեպտեմբեր ամսին ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 8 թերթ:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

9568-11
10 10 2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2011թ. N54

### ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված կարգի / թիվ 1 հավելված/ 7-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 9 արտահերթ նիստի թիվ 2Ն որոշումը և համայնքի բնակիչ Շաքե Ղարդաշյանի դիմումը .

Որոշում եմ

1. Շաքե Ղարդաշյանին տալ բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվություն՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը անրացման աշխատանքներ կատարելու համար :
2. Շաքե Ղարդաշյանին՝ բարեկարգման աշխատանքներն ավարտել մինչև 2012 թվականի մարտի 19-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական սեպտեմբերի 19
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ

<<15>> սեպտեմբերի 2011թ. N 53

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և համայնքի բնակիչ Ալվարդ Ասատրյանի դիմումը

Որոշում եմ

1. 051-005 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Հովհաննես Թումանյան փողոց, 39:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական սեպտեմբերի 15
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<05>> սեպտեմբերի 2011թ. N 52

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և համայնքի բնակիչ Մանուշ Հովհաննիսյանի դիմումը

Որոշում եմ

1. 051-004 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Հովհաննես Թումանյան փողոց, 41:
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական սեպտեմբերի 05
Գ. Գեղակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<05>> սեպտեմբերի 2011թ. N 51

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի թիվ 2 որոշումը և համայնքի բնակիչ Սերյոժա Մանուկյանի դիմումը

Որոշում եմ

1. 064-028 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Ներսես Շնորհալու փողոց, 31:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011 թվականի սեպտեմբերի 05
Գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<05>> սեպտեմբերի 2011թ. N 50

### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 191 ,219[1]-րդ, 281-րդ, 282-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Ավետիս Վասիլի Վասիլյանի վերաբերյալ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի կողմից կազմված Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 191 հոդվածի կանոնները խախտելու մասին 2011թվականի օգոստոսի 25-ի թիվ 244 արձանագրությունը և 2011 թվականի օգոստոսի 29-ի թիվ 88-4/1510704 գրությունը, լսելով խախտում կատարողի բացատրությունը.

Որոշում եմ՝

1. Ավետիս Վասիլի Վասիլյանի նկատմամբ նշանակել վարչական տույժի միջոց՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժին, մյուս օրինակն հանձնել Ավետիս Վասիլյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական սեպտեմբերի05
գ. Գեղակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<12>> սեպտեմբերի 2011թ. N9Ա

### ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ ԿԱԶՄԱԿՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով,<<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 01/07.2/2550-11 գրությունը

Կարգադրում եմ՝

1. Գեղակերտի գյուղական համայնքում կազմավորել քաղաքացիական պաշտպանության շտաբ: Շտաբի կազմը հաստատել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011 թվական սեպտեմբերի 12
գ. Գեղակերտ

Հավելված հաստատված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական
համայնքի ղեկավարի 2011 թվականի սեպտեմբերի 12-ի
թիվ9Ա կարգադրությամբ

# ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ԿԱԶՄԸ

| | | |
|---|---|---|
| 1. | Հովհաննիսյան Արծվիկ | նախագահ |
| 2. | Մաթևոսյան Ասպետ | տեղակալ |
| 3. | Ղազարյան Հովհաննես | քարտուղար |
| 4. | Աբելյան Էդիկ | անդամ |
| 5. | Ավետիսյան Սերյոժա | անդամ |
| 6. | Զաքարյան Դավիթ | անդամ |
| 7. | Մուղումյան Գառնիկ | անդամ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<28>> սեպտեմբերի 2011թ. N10Ա

## ՆԱՏԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի առաջին մասով , 164-րդ հոդվածի առաջին մասով, 167-րդ հոդվածի առաջին մասով, 169-րդ հոդվածով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման հավելված N1-ի 15 ենթակետով և հիմք ընդունելով Նատալյա Հարությունյանի դիմումը

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Նատալյա Հարությունյանի 2011 թվականի ամենամյա արձակուրդը՝ նախատեսված սեպտեմբեր ամսին, տեղափոխել և տրամադրել 2011 թվականի հոկտեմբերի 10-ից՝ 24 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նատալյա Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի նոյեմբերի 11-ից:
3. Նատալյա Հարությունյանի արձակուրդի ընթացքում աշխատակազմի քարտուղարի պարտականությունները դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրա Համբարձումյանի վրա:
4. Առաջատար մասնագետին՝ սահմանված կարգով հաշվարկել և վճարել Նատալյա Հարությունյանին հասանելիք ամենամյա արձակուրդի համար միջին աշխատավարձը:
5. Առաջատար մասնագետին՝ Նաիրա Համբարձումյանին վճարել սահմանված կարգով:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2011թվական սեպտեմբերի 28
գ. Գեղակերտ